

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ*

Նոյեմբերի 13-15-ը երևանում տեղի ունեցավ մեծավաստակ գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրա-կանության ինստիտուտը (ԳԻ)՝ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, իս. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) բանասիրական ֆակուլտետի, ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի համագործակցությամբ:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին ականավոր գիտնականներ, տեսաբան-հետազոտողներ ԳԻ-ից, ՀՊՄՀ-ից, մեծ գրականագետի գործընկերները, ասպիրանտներ, ուսանողներ հանրապետության տարբեր գիտակրթական հաստատություններից: Ընդհանուր առմամբ, ներկայացվեց 24 զեկուցում, հնչեցին գնահատումի ու հիշատակի խոսքեր:

Գիտաժողովը բացվեց ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ և մասնակիցներին ողջունեց ԳԻ տնօրեն, Բ. Գ. Թ. Հերիքնազ Որսկանյանը: Նա, կարևորելով գիտաժողովի կազմակերպումը, ներկաներին ամենայն մանրամասնությամբ ներկայացրեց Ս. Սարինյանի գիտական կենսագրության կարևորագույն դրվագները, նրա բացառիկ դերակատարությունը Հայ գրականագիտության ասպարեզում, ուրույն տեղը՝ ԳԻ գիտական գործունեության տասնամյակների պատմության մեջ: «Գրականությունը հոգեբանական, փիլիսոփայական լայն պարագծերում դիտարկելը հնարավորություն էր տալիս նրան վերարժեքել մեր հոգևոր արժեքները, իսկ հետազոտողից պահանջել գիտական խորագույն, հմուտ ու նրբանկատ վերլուծություն, զգաստ գրելաոճ, գեղարվեստական ճաշակ, հայացքի ուղղություն, անհատական դրոշմ, տեսական գիտելիքներ», – ասաց նա:

ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, մասնավորապես, ասաց. «Մոտիկից ճանաչելով Սարինյանին և երկար տարիներ վայելելով փոխադարձ հարգանքի և վստահության հնարավորությունը, ինձ մշտապես զարմանք են պատճառել նրա մտքի կարգապահությունն ու մտածողության յուրահատկությունը: Նախքան խոշորագույն գրողների մասին առանձին ուսումնասիրությունների հրապարակումը՝ նա հրատարակել է տեսական հիմնարար աշխատություններ՝ խորապես գիտականացնելով գրականության մասին գիտությունը: Սարինյանի «Հայկական ուղմանտիզմ», «Գեղարվեստական գրականության պատմականությունը», «Հայ գաղափարաբանությունը»:

* Ներկայացվել է 20. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

քաջայ գրականության ուսումնասիրության բաժնի վարիչ, բ. գ. թ. Արմեն Ավանեսյանը՝ «Սերգեյ Սարինյանը երիտասարդ գրողների մասին» թեմաներով: Գրականագետ, բ. գ. թ. Գևորգ Էմին-Տերյանը ներկայացրեց «Վահան Տերյանի բանաստեղծական շարքերի փոխադրությունը Սերգեյ Սարինյանի մեկնաբանությամբ» զեկուցումը:

Գի գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ. Վանո Եղիազարյանը զեկուցեց «Պատմական արձակի ժանրակազմ առանձնահատկությունները Հայ հին գրականության մեջ» թեմայով, Գի թուամանյանագիտության խմբի ղեկավար, բ. գ. դ., դոցենտ Եվա Մնացականյանը ներկայացրեց ««Հազարան բլբլի» թուամանյանական մշակումն իբրև մարդու կատարելագործման ու վերածնունդի փոխադրության հայեցողություն» զեկուցումը:

Նույն օրվա երկրորդ նիստի ժամանակ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը Հանդես եկավ «Սերգեյ Սարինյանի «Սերունդներ և ավանդներ» ժողովածուն» թեմայով զեկուցմամբ, ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ., դոցենտ Քնարիկ Աբրահամյան՝ «Ռոմանտիզմի սարինյանական ըմբռնումը» զեկուցումը: Գի գիտաշխատող, բ. գ. թ. Թադևոս Խաչատրյանի զեկուցումը վերնագրված էր «Հայոց գրականության, փոխադրության և ազգային գաղափարաբանության մեկնաբանը»:

Գի Հայ նոր գրականության բաժնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Սիրանուշ Մարգարյանը Հանդես եկավ «Սերգեյ Սարինյանը՝ ազգային գաղափարաբանության տեսաբան» թեմայով զեկուցմամբ, բ. գ. թ., դոցենտ Ամալյա Գրիգորյանը՝ «Գեղագիտությունը Սերգեյ Սարինյանի գրականագիտական դպրոցի քննահամակարգում», Չորս գետք արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների հիմնադրամի փորձագետ, բ. գ. թ. Նաիրա Թամամյանը՝ «Ստեփանոս Օրբելյանի Պատմության նախադրությունը Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ»-ում» զեկուցմամբ: Առաջին օրվա երկրորդ նիստն ավարտվեց ջերմ ու հուզիչ ելույթով: Մարդկային մտերմության, պատվի ու գնահատումի խոսք ասաց Սարինյանի թոռնուհին՝ Երևանի Հայ-ուսական համալսարանի դասախոս Լիա Ասատրյանը:

Գիտաժողովի երրորդ՝ եզրափակիչ օրվա նիստի ժամանակ ելույթ ունեցան գիտաշխատող, բ. գ. թ. Նառա Սարգսյանը՝ «Միջգիտակարգայնության մի քանի հիմնարար դրույթներ Սերգեյ Սարինյանի «Ի՞նչ է գրականության փոխադրությունը» հոդվածում», Գի կրտսեր գիտաշխատող, բ. գ. թ. Սիրանուշ Փարսադանյանը՝ «Սերգեյ Սարինյանի գնահատումները դարավերջի գրական հոսանքների վերաբերյալ և Լևոն Մանվելյանի գրականությունը», Գի կրտսեր գիտաշխատող, բ. գ. թ. Զարինե Սառաջյանը՝ «Քննական հայացք Արցախի գրականության. Սերգեյ Սարինյանի ավանդը» զեկուցումներով: Գի հայցորդ Սոնա Ալավերդյանի զեկուցման վերնագիրն էր ««Արդարություն» մեծ պատումի փնտրումը՝ մեկ բնտանիքի հայեցողական փորձով՝ Հ. Երանյանի «Մեղքի պարան» վեպում»: Գրող, հրապարակախոս Հովհաննես Երանյանը Հանդես եկավ «Մեղքի պարան» վեպի գեղագիտության և պոետիկայի ինչ-ինչ հարցերի վերաբերյալ կարճառոտ ելույթով: Գի հայցորդ Շուշաննա Գրիգորյանը ներկայացավ «Անգոյությունը Աղասի Այվազյանի «Խորքի

խորությունը» գրքում», իսկ ԳԻ ասպիրանտ Արթուր Միրզոյանը՝ «Սերգեյ Սարինյանի «Բաֆֆի» մենագրությունը. կերպարների և գաղափարների համակարգը» գեկուցումներով:

Գիտական հավաքն ավարտվեց ԳԻ հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի, հայ նոր գրականության պատմության բաժնի վարիչ Սիրանուշ Մարգարյանի, բ. գ. դ. Զինաիդա Բալայանի ելույթներով:

Մեծավաստակ գիտնականին նվիրված եռօրյա գիտաժողովն ամփոփեց ԳԻ տնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Որսկանյանը՝ ստացված արդյունքների և հետագա նմանօրինակ գիտական միջոցառումների ծրագրերի վերաբերյալ առաջարկություններով:

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ